ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 08-L **«24» մարտի 2025 թ.**

ՖԻԼՄԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի N 92-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 31-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ֆիլմերի դասակարգման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

X

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2025 թ. մարտի 24-ի N 08 - Լ հրամանի

ՖԻԼՄԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմը տարածելուց առաջ այն դասակարգվում է՝ ֆիլմի իրավատերերի կամ ֆիլմ տարածողների կողմից (Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից գործող՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի, փորձագիտական կազմակերպությունների կամ անհատ փորձագետի մասնակցությամբ):

2. Ֆիլմի դասակարգման համար գնահատման ենթակա են.
1) ֆիլմի թեման, ժանրը, բովանդակությունը և գեղարվեստական լուծումները,
2) ֆիլմում առկա տեղեկատվության ընկալման առանձնահատկությունները՝ որոշակի տարիքային խմբի երեխաների կողմից,
3) ֆիլմում առկա տեղեկատվությամբ երեխաների առողջությանը և զարգացմանը վնաս պատճառելու հավանականությունը:

3. Երեխաների շրջանում տարածման համար արգելված տեղեկատվությունը ներառում է.
1) տեղեկատվություն, որի համատեքստը երեխաներին դրդում է կատարելու գործողություններ, որոնք սպառնալիք են նրանց կյանքի կամ առողջության համար, ներառյալ սեփական առողջության վնասումը, ինքնասպանությունը կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը կամ ուղղված է երեխաներին հակելու կամ այլ մղում առաջացնելու, որպեսզի նրանք կատարեն նման գործողություններ,
2) տեղեկատվություն, որի համատեքստն ի զորու է երեխաների մեջ առաջացնելու թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ծխախոտային ու նիկոտին պարունակող արտադրանքներ, ալկոհոլային արտադրանքներ օգտագործելու, մոլեխաղերի մասնակցելու, թափառաշրջիկությամբ կամ մուրացկանությամբ զբաղվելու ցանկություն,
3) տեղեկատվություն, որի համատեքստը հիմնավորում կամ արդարացնում, խրախուսում կամ թույլատրելի է համարում բռնությունը կամ դաժանությունը կամ դրդում է մարդկանց կամ կենդանիների նկատմամբ կատարելու բռնարար գործողություններ, բացառությամբ սույն չափորոշիչներով նախատեսված դեպքերի,
4) տեղեկատվություն, որի համատեքստը պարունակում է սեռական բռնության պատկեր կամ նկարագրություն,
5) տեղեկատվություն, որի համատեքստը պարունակում է հակահիրավական գործողությունների տարրերի կամ վարքագծի արդարացում (տես՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը),
6) տեղեկատվություն, որի համատեքստը պրոպագանդում է մանկապղծություն,

7) տեղեկատվություն, որը պարունակում է հայհոյախոսություն,
8) տեղեկատվություն, որի համատեքստը գրավիչ է դարձնում պոռնկությամբ զբաղվելը կամ արդարացնում է պոռնոգրաֆիկ բնույթի տեղեկությունը,
9) տեղեկատվություն անչափահասի մասին, որը տուժում է հակահիրավական գործողություններից (անգործությունից), ներառյալ՝ անչափահասի, նրա ծնողների և օրինական այլ ներկայացուցիչների անձնական տվյալների վերաբերյալ և այլ տեղեկություն, որը թույլ է տալիս ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարզելու այդ անչափահասի ինքնությունը (տես՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 2015թ. մայիսի 18-ի ՀՕ-49-Ն օրենքը):

4. Որոշակի տարիքային խմբի երեխաների շրջանում սահմանափակ տարածվող տեղեկատվությունը ներառում է.
1) տեղեկատվություն, որի համատեքստը կարող է պատկերի կամ նկարագրության տեսքով առաջացնել դաժանություն, ֆիզիկական կամ հոգեբանական, սեռական բռնություն, հանցագործություն կամ հակահիրավական այլ գործողություն,
2) տեղեկատվություն, որի համատեքստը երեխաների մոտ, պատկերի կամ նկարագրության տեսքով, կարող է առաջացնել վախ, սարսափ, խուճապ և մարդու արժանապատվությունը նվաստացնող ձևով ներկայացնել ոչ բռնի մահ, հիվանդություն, ինքնասպանություն, դժբախտ պատահար, վթար կամ աղետ կամ դրանց հետևանքները,
3) տեղեկատվություն, որը պատկերի կամ նկարագրության տեսքով ներկայացնում է սեռական հարաբերություններ,
4) տեղեկատվություն, որի համատեքստը պարունակում է անպարկեշտ խոսքեր և արտահայտություններ, որոնք չեն համարվում հայհոյախոսություն:

5. Ֆիլմի դասակարգումն իրականացվում է «Երեխայի իրավունքների մասին» 1996թ. մայիսի 29-ի ՀՕ-59-Ն օրենքի պահանջներին համապատասխան՝ ելնելով ֆիլմում առկա տեղեկատվության բնույթից՝ հետևյալ կատեգորիաներով.
1) **«Ը» (Ընդհանուր)** - նախատեսված է ցանկացած տարիքի դիտողի համար: **«Ը» (Ընդհանուր)** կատեգորիայի ֆիլմերը կարող են ներառել տեղեկատվություն, որի համատեքստը չի վնասում երեխաների առողջությանը կամ զարգացմանը՝ ներառյալ այն տեղեկատվությունը, որը պարունակում է էպիզոդիկ, ոչ նատուրալիստական պատկերներ՝ հիմնավորված ժանրով կամ սյուժեով կամ ֆիզիկական կամ հոգեկան բռնության այնպիսի նկարագրությամբ (բացառությամբ սեռական բռնության), որը դատապարտում է բռնությունը: Պարտադիր պայման է հանդիսանում բռնության դատապարտումը, բռնության զոհի նկատմամբ կարեկցանքը:
2) **«ԾՈՒ»** - խորհուրդ է տրվում դիտել ծնողների ուղեկցությամբ, նախատեսված է 8 և ավելի բարձր տարիքի անձանց համար: **«ԾՈՒ»** կատեգորիայի ֆիլմերը կարող են ներառել տեղեկատվություն, որը երեխաները կարող են համարել շփոթեցնող կամ հիասթափեցնող և կարող է պահանջվել ծնողների, մանկավարժների կամ խնամակալների ուղեկցություն: Դրանք կարող են պարունակել ժանրով կամ սյուժեով հիմնավորված հետևյալ տեղեկատվությունը.
ա. մարդու հիվանդությունների (բացառությամբ ծանր հիվանդությունների) կամ դրանց հետևանքների կարճաժամկետ և ոչ նատուրալիստական պատկեր կամ նկարագրություն, որոնք չեն նսեմացնում մարդու արժանապատվությունը,
բ. դժբախտ պատահարի, վթարի, աղետի կամ ոչ բռնի մահվան ոչ նատուրալիստական պատկեր կամ նկարագրություն, որոնք երեխաների մոտ չեն առաջացնում վախ, սարսափ կամ խուճապ,

գ. հակահիրավական գործողությունների կամ հանցագործությունների չմղող էպիզոդիկ պատկերներ կամ այդ գործողությունների կամ հանցագործությունների նկարագրություն, պայմանով, որ չի հիմնավորվում և չի արդարացվում դրանց թույլատրելիությունը և արտահայտում է բացասական, դատապարտող վերաբերմունք դրանց հանդեպ:

3) **«12ԾՈՒ»** - նախատեսված է 12 և ավելի տարեկան անձանց համար: 12 տարեկանից ցածր անձանց խորհուրդ է տրվում դիտել ծնողի ուղեկցությամբ: Դրանք կարող են ներառել ժանրով կամ սյուժեով հիմնավորված հետևյալ տեղեկատվությունը.

ա. դաժանության կամ բռնության (բացառությամբ սեռական բռնության) դրվագային պատկերում կամ նկարագրություն՝ առանց կյանքից զրկելու կամ վնասվածք պատճառելու նատուրալիստական պատկերման, պայմանով, որ արտահայտվի բացասական, դատապարտող վերաբերմունք դաժանության, բռնության նկատմամբ և կարեկցանք տուժողի նկատմամբ,

բ. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, ծխախոտային, նիկոտին պարունակող արտադրանքի կամ նիկոտին պարունակող արտադրանք օգտագործելու սարքերի, ալկոհոլային արտադրանքների օգտագործման, մոլեխաղերին մասնակցության, թափառաշրջիկության կամ մուրացկանության հպանցիկ (առանց հատուկ ցուցադրության) պատկերում կամ նկարագրություն, պայմանով, որ չի արդարացվում նշված գործողությունների թույլատրելիությունը և արտահայտում է բացասական, դատապարտող վերաբերմունք դրանց նկատմամբ, կամ պարունակում է ցուցում նշված արտադրանքների, միջոցների, նյութերի, ապրանքների օգտագործման վտանգավորության մասին,

գ. տղամարդու և կնոջ սեռական հարաբերությունների էպիզոդիկ, ոչ նատուրալիստական պատկերում կամ նկարագրություն, որի համատեքստը չի շահարկում սեքսի նկատմամբ հետաքրքրությունը և չի կրում նվաստացնող կամ վիրավորական բնույթ, բացառությամբ սեռական ակտի պատկերների:

4) **«15»** - նախատեսված է 15 և ավելի տարեկան անձանց համար, կարող է ներառել ժանրով կամ սյուժեով հիմնավորված հետևյալ տեղեկատվությունը.

ա. դժբախտ պատահարի, վթարի, աղետի հիվանդության կամ մահվան ոչ նատուրալիստական պատկեր կամ նկարագրություն, առանց ցուցադրելու այնպիսի հետևանքներ, որոնք կարող են երեխաների մոտ առաջացնել վախ, սարսափ կամ խուճապ,

բ. դաժանության կամ բռնության (բացառությամբ սեռական բռնության) ոչ նատուրալիստական պատկեր կամ նկարագրություն, առանց կյանքից զրկելու կամ խեղելու գործողության նատուրալիստական ցուցադրման, պայմանով, որ արտահայտվի կարեկցանք զոհի նկատմամբ կամ բացասական, դատապարտող վերաբերմունք դաժանության, բռնության նկատմամբ,

գ. տեղեկություններ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին (առանց դրանց ցուցադրման), դրանց օգտագործման վտանգավոր հետևանքների ցուցադրմամբ, պայմանով, որ արտահայտվի բացասական կամ դատապարտող վերաբերմունք այդ թմրամիջոցների կամ նյութերի օգտագործման նկատմամբ կամ պարունակի ցուցում դրանց օգտագործման վտանգավորության մասին,

դ. առանձին հայհոյանքներ կամ արտահայտություններ, բայց ոչ հայհոյախառն բառապաշար,

ե. սեռական հարաբերությունների պատկերների ցուցադրում կամ նկարագրություն (սեռական նվաստացուցիչ տեսարանների կամ սեռական

շահագործման բնույթ չունեցող), բացառությամբ սեռական գործողությունների նատուրալիստական պատկերումների կամ նկարագրությունների:

5) **«18»** - նախատեսված է 18 և ավելի տարեկան անձանց համար.

ա. **«18»** ֆիլմերը նախատեսված են միայն մեծահասակների համար, քանի որ դրանք կարող են պարունակել նախորդ կատեգորիաների բոլոր սահմանափակումները,

բ. կարող է պարունակել բացահայտ բռնություն, տևական սեռական գործողությունների և թմրամիջոցների օգտագործման, ինչպես նաև սադրիչ բովանդակությամբ տեսարաններ, բացառությամբ իրական սեռական ակտի:

6) **«21»** արգելված է 21 տարին չլրացած անձանց համար.

«21» ֆիլմերը նախատեսված են միայն մեծահասակների համար: Այս դասակարգումը սահմանափակ կատեգորիա է՝ բացահայտ սեռական բովանդակության պատճառով, ներառյալ՝ իրական սեռական ակտը: